

## **ՓԱՍՏԱՔԱՆԻ ՎԱՐՔԱԳԻԾԸ** **ՎԱՏԱՀՈՐԴՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՀԱԿԱՍՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ**

Վստահորդի համար չափազանց կարևոր է իմանալ, որ իր իրավունքներն ու շահերը պաշտպանելիս փաստաբանը չի հետապնդում այլ նպատակներ, չունի այնպիսի պարտավորություններ կամ պարտականություններ, որոնք կազդեն նրա գործողությունների ազատության և որոշումների վրա: Եթե փաստաբանի կողմից տրամադրվող խորհրդատվության, որոշումների կամ գործողությունների ազատության մեջ նկատվում է որոշակի կախվածություն հակասությունից բխող հանգամանքներից, ապա հստակ կարելի է խոսել վստահորդի համար առաջացած իրական վտանգի մասին (նրա գործին կարող է անդառնալի վնաս հասցվել):

Ձևավորված կանոնի համաձայն՝ փաստաբանն իրավունք չունի միաժամանակյա խորհրդատվություն տրամադրել հակառակորդ կողմերին կամ ներկայացուցչություն իրականացնել ինչպես նաև զբաղվել հարցի լուծմամբ, որի ժամանակ հնարավոր է կողմերի միջև շահերի հակասություն առաջանա:

Բացի այդ, պետք է նշել, որ փաստաբանի և վստահորդի միջև ակնհայտ հակասական իրավիճակներ առաջանում են ոչ այդքան հաճախ, քանի որ առողջ դատողությամբ փաստաբանը երբեք չի գնա այնպիսի քայլի, որ մի օր կողմերից մեկին իրավաբանական օգնություն տրամադրի, հաջորդ օրը՝ մյուս կողմին: Սակայն երբեմն այնպիսի իրավիճակ է ստեղծվում (օրինակ՝ հեռավոր մարզերում, որտեղ գործում են քիչ թվով փաստաբաններ), երբ որոշակի հանգամանքներից ելնելով, մի փաստաբանը մի քանի օրվա ընթացքում կարող է ընդունել նույն գործերով տարբեր քաղաքացիների (հակառակորդ կողմերի): Օրինակ՝ երբեմն լինում են դեպքեր, երբ ամուսիններն ամուսնալուծվելիս իրավաբանական օգնության անհրաժեշտություն ունեն, սակայն նրանցից ոչ մեկն այլ փաստաբանի դիմելու հնարավորություն չունի: Ի՞նչ պետք է անել այս պարագայում: Անկախ ստեղծված իրավիճակից՝ փաստաբանը պարտավոր է մերժել ամուսիններից մեկին կամ նրան անհապաղ տեղեկացնել իրեն առաջինը դիմած ամուսնուն իրավաբանական օգնություն տրամադրելու մասին, միանգամայն տեղին կլինի նաև, կողմերին համատեղ իրավաբանական օգնություն տրամադրելու փաստաբանի առաջարկը:

Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների խորհրդի կողմից սահմանած Եվրոպայի փաստաբանների համար վարքագծի կանոնագրքի դրույթներով, որոնք իրենց արտացոլումն են գտել «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում և Փաստաբանի վարքագծի կանոնագրքում սահմանված է, որ փաստաբանն իրավունք չունի իրավաբանական օգնություն ցույց տալու այն դեպքում, երբ ներկայիս վստահորդի շահերը հակասում են նախկին վստահորդի շահերին, բացառությամբ այն դեպքերի, երբ նախկին վստահորդը տալիս է իր գրավոր համաձայնությունը: Այսինքն, եթե փաստաբանի կողմից ներկայացվում է վստահորդի շահերը որևէ գործում, և այդ անձի շահերը հակասում են նախկին վստահորդի շահերին, փաստաբանն իրավունք չունի ներկայիս վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալու, բացառությամբ՝ նախկին վստահորդի

կողմից տրված գրավոր համաձայնության դեպքերի, հակառակ պարագայում, դա հիմք է հանդիսանում փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար:

Պրակտիկայում ավելի հաճախ հանդիպում ենք թաքնված՝ ոչ ակնհայտ շահերի բախման և ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը (այսուհետ՝ նաև խորհուրդ) «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ նաև՝ օրենք) 20-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի խախտման հիմքով («Փաստաբանն իրավունք չունի իրավաբանական օգնություն ցույց տալու այն դեպքում, երբ... 4) պետք է ներկայացնի վստահորդի շահերը որևէ գործում, և այդ անձի շահերը հակասում են նախկին վստահորդի շահերին, բացառությամբ այն դեպքերի, երբ նախկին վստահորդը տալիս է իր գրավոր համաձայնությունը:») փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու մասին որոշմամբ արձանագրել է, որ փաստաբանի կողմից վերոնշյալ նորմի խախտումները թույլ տալու հանգամանքները պարզելու համար նախ անհրաժեշտ է պարզել, թե արդյո՞ք, Պատասխանողի արարքում առկա է մեղավորություն: Այսինքն, շահերի հակասության առկայության հիման վրա փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելը յուրաքանչյուր դեպքում կախված է տվյալ գործի փաստերից:

Մի շարք այդպիսի իրավիճակների՝ ոչ ակնհայտ շահերի բախման վերլուծություններ է կատարել ՌԴ-ում գործող փաստաբան Մ.Յու. Բարշևսկին իր հեղինակային «Փաստաբանի վարքագիծը» աշխատության մեջ: Դիտարկենք մեկ օրինակ՝ փաստաբանը դատարանում մի բարձրաստիճան պաշտոնյայի շահերն է ներկայացնում ընդդեմ մի հայտնի լրագրողի՝ զրպարտության գործով: Դատական գործընթացը ձգձվում է և այդ ընթացքում լրագրողը հրապարակում է մի շարք հոդվածներ այլ պաշտոնյաների և քաղաքական գործիչների մասին, որոնցից մեկի հետևանքով նույնպես հայց է հարուցվում նրա դեմ՝ նույնաբովանդակ պահանջով: Միևնույն ժամանակ, լրագրողը գտնվում է իր նախկին կնոջ հետ դատական գործընթացի մեջ՝ ամուսնալուծության և համատեղ կյանքում ձեռքբերված գույքից բաժնի առանձնացման պահանջներով: Հարկ է նշել, որ փաստաբանն ու լրագրողը վաղուց մտերիմ հարաբերությունների մեջ են գտնվում: Լրագրողը խնդրում է փաստաբանին ներկայացնել իր շահերը զրպարտության գործով իր դեմ հարուցված երկրորդ հայցի շրջանակում և ամուսնալուծության հայցով: Փաստաբանը մերժում է:

Բերված օրինակում մասնագիտական պարտականությունների տեսանկյունից փաստաբանը ճիշտ վարքագիծ է դրսևորել՝ չընդունելով լրագրողի նոր դատական գործի հանձնարարություն այն պահին, երբ վերջինիս դեմ ընթացող մեկ այլ դատական գործով ներկայացնում է հակառակորդ կողմի շահերը, թեկուզ և այդ գործն ընդհանրապես կապված չէ իրեն առաջարկվող նոր գործի հետ: Նա չէր կարող պահպանել վստահությունը պաշտոնյա-վստահորդի առջև, լիարժեք վստահություն չէր ունենա նաև լրագրողի մոտ, ով չէր կարող մոռանալ և զգայական մակարդակի վրա հաշտվել այն փաստի հետ, որ «իր» փաստաբանը գործի բերումով որոշակի հանգամանքներում աշխատում է իր դեմ: Պաշտոնյա-վստահորդն ընդհանրապես կարող էր մտածել, որ իր փաստաբանին «զնել են»: Եվ քանի որ բոլոր այս դատական գործերը մեծ հնչեղություն էին

ստացել, ապա հստակ կարելի է ասել, որ հասարակության կողմից, որին ըստ էության չի էլ հետաքրքրում, որ օրենքով որևէ արգելք չկա նման հանձնարարություն ընդունելու համար, փաստաբանը կընկալվեր որպես անսկզբունքային մարդ:

Այսպիսով, փաստաբանն իր մասնագիտական գործունեության ընթացքում հնարավորինս պետք է զերծ մնա նմանատիպ իրավիճակներից, չպետք է կատարի այնպիսի գործողություններ, որոնք կարող են կասկածի տակ դնել նրա հեղինակությունը, ազնվությունը և իր գործունեությամբ փաստաբանը պետք է նպաստի փաստաբանի մասնագիտության նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը:

### ***Մարինե Ֆարմանյան***

*«Փաստաբանների պալատի  
երիտասարդական խորհուրդ»*